# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ «ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ջրվեժ «18» «դեկտեմբերի» 2023թ.

Ջրվեժի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ն.Սանթրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տեխնիկական տնօրեն Գ.Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված «Ջրվեժ համայնքի կարիքների համար արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների» մատուցման «ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի բ. ենթակետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագրի համաձայն, Պայմանագրի 4.1 կետով պայմանագրի գինը սահմանվում է 1 580 000 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է ծառայություններ մատուցման պարտավորությունը իրականացնել սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող փոփոխված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (Հավելված 1):

1.3 Պայմանագրի Հավելված 1-ում՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

### 2.Համաձայնագրի վճարման կարգը

2.1 Պայմանագրի Հավելված 2-ում՝ «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 2-ի:

### 3.Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարզոր իրավաբանական ուժ: Հավելվածներ N1-ը և N2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

### 4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| Ջրվեժի համայնքապետարան | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ |
| Ջրվեժ համայնք, Մելքոնյան 76 | Երևան, Քանաքեռի 13փ., տ. 32/1 |
| ՀՀ Ֆին.Նախարարության ԿԳ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900102554152 | Հ/Հ 1570066404680100 |
| ՀՎՀՀ 03546091 | ՀՎՀՀ09218126 |
| ---------------------------- (ստորագրություն) | ---------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 18 » «դեկտեմբերի» 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

Հավելված թիվ 1
«04» դեկտեմբերի 2023թ. կնքված
ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 2 | 71220000 | Ջրվեժ համայնքի կարիքների համար արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ<br>Տես ստորև | դրամ | 1 580 000 | 1 | Ջրվեժ համայնք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ |

**Պատվիրատու**
Ջրվեժի համայնքապետարան
Ջրվեժ համայնք, Մելքոնյան 76
ՀՀ Ֆին.Նախարարության ԿԳ
Հ/Հ 900102554152
ՀՎՀՀ 03546091

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ
Երևան, Քանաքեռի 13փ., տ. 32/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570066404680100
ՀՎՀՀ09218126

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Չափաբաժին 2

Ջրվեժ համայնքի կարիքների համար արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների

| Հ/հ | Փողոցի անվանումը | Կարգավիճակը (գլխավոր, հիմնական, երկրորդային և այլ) | Երկարությունը մ | Լայնությունը մ | Լուսատուների տեսակը* (LED կամ այլ) | Լուսատուների ենթադրվող քանակը, հատ | Սյուների կարգավիճակը (նոր/առկա) | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ջրվեժ բնակավայր** | | | | | | | |
| 1 | 19-րդ փ, 26 փ-ի խաչմ դեպի 33 փ | երկրորդային | 650 | 7-9 | LED | 26 | նոր | |
| 2 | 17-րդ փողոց | երկրորդային | 360 | 7-10 | LED | 15 | նոր | |
| 3 | 18-րդ փողոց | երկրորդային | 200 | 7-10 | LED | 8 | նոր | |
| 4 | 21-րդ փողոց | երկրորդային | 523 | 8-10 | LED | 21 | նոր | |
| 5 | 23-րդ փողոց | երկրորդային | 284 | 8-10 | LED | 10 | նոր | |
| 6 | 25-րդ փողոց | երկրորդային | 315 | 8-10 | LED | 13 | նոր | |
| 7 | 27-րդ փողոց | երկրորդային | 300 | 8-10 | LED | 12 | նոր | |
| 8 | 29-րդ փողոց | երկրորդային | 290 | 8-10 | LED | 12 | նոր | |
| 9 | 30-րդ փողոց | երկրորդային | 280 | 8-10 | LED | 11 | նոր | |
| 10 | 31-րդ փողոց | երկրորդային | 240 | 8-10 | LED | 10 | նոր | |
| 11 | 32-րդ փողոց | երկրորդային | 170 | 8-10 | LED | 7 | նոր | |
| 12 | 33-րդ փողոց | երկրորդային | 120 | 8-10 | LED | 5 | նոր | |
| 13 | 20-րդ փողոցի շարունակություն | երկրորդային | 200 | 7-8 | LED | 8 | նոր | |
| | **Ձորաղբյուր բնակավայր** | | | | | | | |
| 1 | Հատիսի փողոց | երկրորդային | 720 | 7-10 | LED | 29 | նոր | |
| 2 | Հատիսի փողոցի 1-ին նրբանցք | երկրորդային | 140 | 7-9 | LED | 5 | նոր | |
| | **Ձովք բնակավայր** | | | | | | | |
| 1 | 7-րդ փողոց | երկրորդային | 120 | 10-11 | LED | 5 | նոր | |
| 2 | 1-ին փող և 2-րդ փող շարուն | երկրորդային | 200 | 6-9 | LED | 8 | նոր | |
| 3 | Գլխավոր խճուղու վրա գտնվող ենթակայանից մինչև 1-ին փողոց | հիմնական, երկրորդային | 350 | 8-9 | LED | 8 | նոր/առկա | |

* 1. Հենասյուների միջև հեռավորությունն ու բարձրությունը ինչպես նաև լուսատուների ընտրությունը պետք է կատարվի և հիմնավորվի համակարգչային սիմուլյացիոն ծրագրով (DiaLux կամ այլ) և նախագծանախահաշվային փաստաթղթերում պետք է ընդգրկվեն համապատասխան աղյուսակներն ու գրաֆիկները:

2. Լուսատուների ընտրության ընթացքում առաջարկում ենք ղեկավարվել ներքոհիշյալ աղյուսակով:

| Հ/հ | Լուսատուի բնութագրերը | |
|---|---|---|
| 1 | Լուսատվությունը, լմ/Վտ | 1. ≥140 |
| 2 | Հզորության գործակիցը | 2. >0.9 |
| 3 | Գունափոխանցման գործակիցը | 3. ≥70 |
| 4 | Ծառայության<br>ժամկետը, ժամ | 4. ≥30000 |
| 5 | Լարման աշխատանքային տիրույթը, Վ | 5. 150÷250 |
| 6 | Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթը, °C | 6. -25÷+40 |
| 7 | Գունային ջերմաստիճանը, Կ | 7. 4000±500 |
| 8 | Պաշտպանվածության դասը | 8. ≥IP65 |
| 9 | Լուսադիոդների քանակը (հատ) | 9. ≥100 |
| 10 | Երաշխիքային ժամկետ | 10. ≥2 տարի |
| 11 | Լուսատուի հավաստագրերը | 11. ENEC, TUV, EAC<br>և այլն |
| 12 | Լուսատուները պետք է համապատասխանեն ՄՄ ՏԿ/004/2011 «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» և ՄՄ ՏԿ/020/2011 «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին: | |

*** Մասնակիցը պետք է ունենա նմանատիպ <u>աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթի կազմման համապատասխան ոլորտի լիցենզիա,</u> որը պայմանագիրը կնքելու ժամանակահատվածում պետք է ներկայացնի պատվիրատուին:**

**Նախագիծը մշակել համաձայն ներքոգրյալ ցանկի**

1. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն;
2. ՍՆ 541-82 - Հրահանգ՝ քաղաքների, ավանների և գյուղական բնակավայրերի արտաքին լուսավորման նախագծման:
3. Նախագիծը ներկայացնել 3 օրինակից,
4. Նախահաշիվը ներկայացնել հայերեն և ռուսերեն լեզուներով, էլեկտրոնային և թղթային տարբերակներով:
5. Աղյուսակում նշված «Փողոցների անվանումը» սյունակի յուրաքանչյուր համարի համար կազմել առանձին նախահաշիվ և ներկայացնել մեկ փաթեթով;
6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Ջրվեժի համայնքապետարանի հետ;
7. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները;
8. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, շինարարական աշխատանքների համար կազմել ծավալաթերթ;
9. Նախագծի համաձայնեցումները շահագրգիռ կազմակերպությունների հետ;
10. Նախագիծը և նախահաշիվը ներկայացնել էլեկտրոնային կրիչով:
11. Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:
12. Շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան;
13. Ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը;

*** Նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթը պատվիրատուին պետք է հանձնվեն հետևյալ տեսքով՝**

1. Ուղեգծի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ և գեոդեզիա
2. Ընդհանուր բացատրագիր
3. Ինժեներական /ներքին և արտաքին/ լուծումներ /գծագրական և տեքստային նյութեր/
4. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ

5.Շինարարության կազմակերպման նախագիծ

6.Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ

7.Նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթները համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

* Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AutoCAD և PDF տարբերակներով, նախահաշիվը և ծավալաթերթը ՝ EXCEL տարբերակով հայերեն և ռուսերեն լեզուներով:

**Նախագծի համաձայնեցումը**

Նախագիծը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների հետ (Շրջակա միջավայրի նախարարության, ԱԻՆ և այլն) ըստ անհրաժեշտության:

**Այլ պահանջներ**

Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:

Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:

**Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում:**

Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:

Նախագծողի կողմից շինարարության սկզբի պահին պետք է կատարվի կառույցի նշահարումը և հանձնվի կապալառուին:

***<u>Եզրակացություններ</u>***

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում

**Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների ձեռքբերում

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)**

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից՝ **20 օրացուցային օր**:

**<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>**

Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

**Այլ պահանջներ**

Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:

Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:

**Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում:**

Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:

***<u>Եզրակացություններ</u>***

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում

**Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների ձեռքբերում

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)**

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ **20 օրացուցային օր**:

**<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>**

Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»)***, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

*** Փողոցների անվանում և փողոցների երկարություններ սյունակները կարող են ենթարկվել փոփոխությունների՝ նախագծման աշխատանքների ընթացքում՝ ելնելով անհրաժեշտությունից:*

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| Ջրվեժի համայնքապետարան | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ |
| Ջրվեժ համայնք, Մելքոնյան 76 | Երևան, Քանաքեռի 13փ., տ. 32/1 |
| ՀՀ Ֆին.Նախարարության ԿԳ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900102554152 | Հ/Հ 1570066404680100 |
| ՀՎՀՀ 03546091 | ՀՎՀՀ09218126 |
| ---------------------------- (ստորագրություն) | ---------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
« 18 » «դեկտեմբերի» 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

Հավելված թիվ 2
«04» դեկտեմբերի 2023թ. կնքված
ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 71220000 | Ջրվեժ համայնքի կարիքների համար արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1580000 | 1580000 |

**Պատվիրատու**
Ջրվեժի համայնքապետարան
Ջրվեժ համայնք, Մելքոնյան 76
ՀՀ Ֆին.Նախարարության ԿԳ
Հ/Հ 900102554152
ՀՎՀՀ 03546091
________________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ
Երևան, Քանաքեռի 13փ., տ. 32/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570066404680100
ՀՎՀՀ09218126
________________
(ստորագրություն)
Կ.Տ